Հաշվետվություն

/2025 թվական/

Կրթություն

ՀՀ Շիրակի մարզում գործում են 159 հանրակրթական դպրոցներ, որոնցից 145-ը մարզային ենթակայության, 11-ը՝ ՀՀ ԿԳՄՄՆ և 3-ը ոչ պետական:

Աշակերտների թիվ.

- ***Ընդհանուր թիվ***

31963, որից մարզային ենթակայության 27695 աշակերտ:

- *1-ին դասարանցիներ.*

2813 աշակերտ, որից մարզային ենթակայության 2789 աշակերտ:

- ***Դպրոցականների առարկայական Օլիմպիադաների մասնակիցներ.***

Դպրոցական փուլի մասնակիցներ՝ 7565 աշակերտ,

Մարզային փուլի մասնակիցներ՝ 1017 աշակերտ,

Հանրապետական փուլերի մասնակիցների թիվ՝ 144

որից մրցանակներ՝ 34 դիպլոմ, 22-գովասանագիր,

- *Միջազգային օլիմպիադաներ՝ 25 մրցանակակիր աշակերտներ,*
- ***ԲՈՒՀ ընդունված.***

2025 թվ-ին դիմել է 1413 շրջանավարտ, որից ընդունվել է 1040-ը,

- *2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կամավոր ատեստավորումը հաղթահարած ուսուցիչներ՝ 737 ,*
- *Տարակարգ ստացած ուսուցիչներ՝ 119,*
- *Հայտարարվել է 463 անգամ տնօրենի և 139 անգամ վարչատնտեսական մասի համակարգողի մրցույթներ, ընդունվել է 157 տնօրենի և 107 վարչատնտեսական մասի համակարգողի հավակնորդի փաստաթղթերի փաթեթներ,*
- *2025 թվականին 7-13 տարեկան 304 աշակերտ՝ Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների, մեկնել են Հանքավանի «Արագած» ճամբար՝ ամառային հանգստի:*
- Թվով 111 կորած և խոտանված ավարտական փաստաթղթերի վերականգման գործընթացի կազմակերպում,
- Մարզային ենթակայության՝ կառավարման նոր համակարգի անցած հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների փոփոխություն

/մարզպետի համապատասխան որոշումների նախագծերի կազմում և հաստատման ներկայացում/ , ընդհանուր 145 որոշման նախագիծ,

- Որպես ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ մասնակցություն կրթական ոլորտին վերաբերող տարբեր դատարաններում քննվող դատական գործերին,
- Մարզային ենթակայության դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների /թվով 28 միասնական խորհուրդ/ ձևավորման աշխատանքների իրականացում՝սահմանված կարգի համաձայն համապատասխան փաստաթղթային հիմքերի հավաքագրում, ուսումնասիրում և մարզպետի որոշման նախագծերի նախատրաստում ու ներկայացում, ներկա պահին ձևավորված է 26 խորհուրդ,
- ՀՀ ԿԳՄՄՆ կողմից տրամադրված բաշխման քանակների հիման վրա դասագրքերի բաժանում մարզի դպրոցներին, 2025-2026 ուս տարվա համար 1-4-րդ դասարաններին բաժանվել է 47 անուն դասագիրք /75585 կտոր/,
- Ուսումնաօժանդակ և դիդակտիկ նյութերի բաշխում դպրոցներին /ՀՀ վարչական և տնտեսական քարտեզներ-301 հատ, Առողջ ապրելակերպ /6-րդ, 8-րդ, 10-րդ դաս./, Հասրակագիտություն առարկայի մեթոդական ձեռնարկ՝ յուրաքանչյուր դպրոցին 1 հատ

- ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման 2025 թվականին վերապատրաստումներին ներգրավված են եղել 11 մանկավարժ, 2026 թվականին վերապատրաստումներին կմասնակցի 19 մանկավարժ,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցություն ՀՀ Շիրակի մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի աշխատանքներին /ոլորտ՝ կրթություն/, 2025 թվականին իրականցվել է մարզի 3 համայնքների՝ Գյումրիի, Արթիկի և Ամասիայի ՏԻ մարմինների լիազորությունների իրականացման իրավական հսկողություն,

- ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված են 27 վերանորոգվող/հիմնանորոգվող և 12 կառուցվող դպրոցներ, որոնցից 12-ը արդեն իսկ հանձնվել են շահագործման:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2025 թվականին իրականացված ծրագրերը նպատակ են ունեցել բարձրացնելու մշակույթի դերն ու պահպանելու ազգային մշակութային արժեքները:

2025 թվականի աշխատանքային ծրագրով Շիրակի մարզի մշակույթի ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են եղել՝

- ✓ մշակույթի համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության զարգացումը,
- ✓ բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը,
- ✓ ոլորտի աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները,
- ✓ մասնագիտական կրթության բնագավառում համապատասխան բարձր որակի ապահովումը:

Շիրակի մարզի մշակույթի ոլորտի զարգացման 2025 թվականին իրականացված քաղաքականության գերակայություններն են եղել՝

- ✓ ստեղծագործական գործունեության աջակցում և խթանում,
- ✓ մշակութային արժեքների պահպանում և տարածում,
- ✓ մշակութային զարգացման իրավական և տնտեսական կարգավորում:

Պետական մշակութային քաղաքականությունը ՀՀ Շիրակի մարզում իրականացվել է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող մշակութային ՊՈԱԿ-ների /Գյումրու ժողովրդական ճարտապետության և քաղաքային կենցաղի թանգարան, Շիրակի երկրագիտական թանգարան, Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ, Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ և Ամասիայի մանկական արվեստի դպրոց/ միջոցով:

2025 թվականին ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող՝

❖ **Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանում** անց են կացվել բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում **5** ժամանակավոր ցուցահանդես, թանգարանն ունեցել է **23525** այցելու:

Թանգարանն համագործակցել և համատեղ ցուցահանդեսներով է հանդես եկել Հայաստանի ազգային պատկերասրահի, Ս.Փարաջանով տուն-թանգարանի, Շիրակի երկրագիտական թանգարանի, Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի և Ժողովրդական արհեստների թանգարանի հետ՝ գործգագործության անվճար դասընթացներ կազմակերպել:

Թանգարանի տնօրեն՝ Անի Նազարյանը 2025 նոյեմբերի 11-17-ը Դուբայում մասնակցել է թանգարանների Միջազգային Խորհրդի /ICOM/ 27-րդ համաժողովին և հանդես եկել «Ազգագրական թանգարանները և արհեստների հանրահռչակումը թանգարանում. Դարբնության ավանդույթի ներկայացումը Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի օրինակով» թեմայով զեկույցով:

❖ **Շիրակի երկրագիտական թանգարանում** անց են կացվել բազմաբնույթ միջոցառումներ, ունեցել է **7** ժամանակավոր ցուցահանդես, **7250** այցելու, շարունակվել է թանգարան մուտք գործած նյութերի ուսումնասիրությունը և կամերալ մշակումը, պատրաստվել են նյութերի

գրչանկարներ և տախտակներ, շարունակվել են հնագիտական պեղումները Զրաձորում, Ազատանում և Զրափիում:

Թանգարանն համագործակցել և համատեղ ցուհանդեսով հանդես է եկել Սարդարապատի ազգային թանգարանի հետ, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի և Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի հետ համատեղ կազմակերպված Հայկական գորգերի և կարպետների ցուցահանդեսին ներկայացրել է թանգարանի ֆոնդերում պահվող եզակի ցուցանմուշներ, «Եվրոպական հնագիտության օրեր» միջոցառման շրջանակներում կազմակերպել Մեծ Սեպասար բնակատեղիի և Քեթիի դամբարանադաշտի վաղ բրոնզի դարաշրջանի հնագիտական գտածոների ցուցադրություն:

❖ **Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը** կազմակերպել է **24** համերգ՝ **10190** հանդիսականով:

Նվագախմբի ձեռքբերումներից են՝

- ✓ Պատանի երաժիշտ կատարողների հետ /Գերմանիա, Չինաստան, Ռուսաստան, Խորվատիա/ համատեղ համերգը,
- ✓ Միջազգային մրցույթների դափնեկիր դաշնակահարուհի Անահիտ Ստելմաշովայի մասնակցությամբ /Վրաստան/ համերգը,
- ✓ ՀՀ ժողովրդական արտիստ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի մասնակցությամբ՝ մեծ կոմպոզիտոր Բախի 340-ամյակին նվիրված համերգը,
- ✓ Կոմպոզիտորների, նոր՝ դեռևս չկատարված, ստեղծագործությունների կատարմամբ Դիլիջանի Էդվարդ Միրզոյանի անվ. կոմպոզիտորների տանը կայացած «Հայ ժամանակակից երաժշտության 9-րդ փառատոն»-ին մասնակցությունը:

❖ **Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբը** կազմակերպել է **42** համերգ՝ **7166** հանդիսականով:

Նվագախմբի ձեռքբերումներից են՝

- ✓ Ավագ Մարգարյանի և Գյումրու ժող. գործիքների պետական նվագախմբի համատեղ համերգը Երևանի Առնո Բաբաջանյան համերգասրահում,
- ✓ «Երգ-Երգոց» երաժշտական ծրագրում նկարահանումը և Հայաստանի հանրային հեռուստաալիքով ցուցադրումը,
- ✓ «Հայ երգը» խորագրով համերգը Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում,
- ✓ «Շնորհակալություն բժիշկ» միջոցառման մասնակցությունը /Իզմիրյան ԲԿ/:

❖ **Ամասիայի մանկական արվեստի դպրոցում** ուսում են ստացել աշակերտներ ինչպես Ամասիայի, այնպես էլ տարածաշրջանի գյուղերից: Դպրոցի սաները մասնակցել են բազմաբնույթ միջոցառումների, մրցույթների ու փառատոների, զբաղեցրել պատվավոր տեղեր՝

- ✓ ՀՀ ք. Երևան՝ **«Էտյուդ» արվեստի մրցույթ-փառատոն**՝ II և III կարգ,
- ✓ Ուկրաինա, ք. Չեռնիգով՝ **«Երաժշտական խճանկար» III մրցույթ-փառատոն**՝ Մեծ մրցանակ և I կարգ,
- ✓ ք. Գյումրի՝ **«Հայաստան» երգչախմբային փառատոն**՝ Մեծ մրցանակ,
- ✓ ք. Էջմիածին՝ **«Փոքրիկ քայլ» երաժիշտ կատարողների VI մրցույթ-փառատոն**՝ I և II կարգ,

- ✓ ք. Երևան՝ **«Հայրենիքը, արվեստն ու ես » հանրապետական մրցույթ՝** Հաջող մասնակցության համար մրցանակ,

- Կազմակերպվել է 2023-2024 թվականներին կամավոր ատեստավորում անցած պետական կամ համայնքային մշակութային գործունեություն ծավալող կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճար ստացող թվով **9** մանկավարժական աշխատողի հավելավճարի փոխհատուցման գործընթացը:
- Կազմակերպվել է ՀՀ պետական բյուջեից երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի շրջանակներում թվով **16** երաժշտական և արվեստի դպրոցների և **2** մարզամշակութային կենտրոնի ազգային, լարային, փողային նվագարարների ուսուցման բաժիններում սովորող **193** աշակերտի ուսման վարձավճարի փոխհատուցման գործընթացը:

Ծրագրում ընդգրկված հաստատությունները բարձր արդյունքներով մասնակցել են «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպած «Հայրենիքն, արվեստն ու ես» մրցույթ ստուգատեսին:

- Շարունակվել է դպրոցական բաժանորդային ծրագիրը: 2025-2026 ուս.տարվա համար մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող թվով **31855** աշակերտի տրամադրվել է անվանական 1 աբոնեմենտ՝ անվճար երկու մշակութային հաստատություն (թանգարան կամ պատկերասրահ և թատրոն կամ համերգասրահ) մեկ անգամ մուտք գործելու համար:

2025 թվականին դպրոցական բաժանորդային ծրագրում ընդգրկված մարզի մշակութային հաստատություններն աբոնեմենտային տոմսերով սպասարկել են հանրապետության ողջ տարածքից մարզ այցելող **40000-ից** ավել աշակերտ և ուսուցիչ, որից մարզային ենթակայության՝

- ✓ Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը՝ 4 համերգ՝ 532 հանդիսատես,
- ✓ Գյումրու ժող.գործիքների նվագախումբը՝ 12 համերգ՝ 1768 հանդիսատես,
- ✓ Գյումրու ժող.ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը՝ 4006 այցելու:

Ապահովել է սպորտային պետական քաղաքականության իրականացումը մարզում:

Կազմակերպվել են ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական-զանգվածային միջոցառումներ: Իրականացվել է հսկողություն՝ մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ:
Հնարավոր աջակցություն է ցուցաբերվել.
- աշխարհի և Եվրոպայի պաշտոնական առաջնություններին ՀՀ հավաքական թիմերի կազմերում հանդես եկող մարզի ներկայացուցիչներին,
-մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների թիմերին՝ ՀՀ պաշտոնական առաջնություններին նախապատրաստվելու և մասնակցելու գործընթացում,
-մարզաձևերի ֆեդերացիաներին, համայնքապետարաններին, մարզական ու ուսումնական հաստատություններին՝ առաջնություններ, մրցաշարեր, հուշամրցումներ և սպորտլանդիաներ կազմակերպելու և անցկացնելու համար:
Իրականացվել են ՀՀ Շիրակի մարզպետին և մարզպետի աշխատակազմին հասցեագրված գրությունների, դիմումների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքներ: Մասնակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացման գործընթացներին:
Շիրակի մարզում գործել են1 մարզական քոլեջ, 28 մարզադպրոց, մարզական հասարակական կազմակերպությունների 2 մասնաճյուղ, 1 ֆուտբոլի ակադեմիա,ինչպես նաև ՊՈԱԿ-ների և ՀՈԱԿ-ների ենթակայությամբ գործող 5 մարզական բաժանմունք: Նշված 37 մարզական կազմակերպություններում հաշվառված են եղել 7859 պարապող(որից 1025-ը աղջիկ) և 435 մարզիչ-մանկավարժ: Մարզի բնակավայրերում գործել են նաև արևելյան մարտարվեստի տարաբնույթ խմբեր:

- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից.

-կազմակերպվել են դպրոցականների շրջանում անցկացվող«ՀՀ վարչապետի գավաթ» խորագիրը կրող սեղանի թենիսի, թիմային խաղուղավազքի, հեծանվավազքի և լողի սիրողական մրցաշարերի, ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող բասկետբոլի և վոլեյբոլի լիգա մարզական խաղերի, 7-12-րդ դասարանների սովորողների սպարտակիադայի, 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև սպորտլանդիայի և շախմատի օլիմպիադայի համայնքային ու մարզային փուլերիմրցումները և ապահովել են մարզի թիմերի մասնակցությունը միջոցառումների հանրապետական եզրափակիչ փուլերի մրցումներին,
-կազմակերպվել է իր նախադեպը չունեցող «Մարզամշակութային մրցույթ» մարզային միջոցառումը՝ դպրոցների մանկավարժներով համալրված թիմերի միջև,
-հնարավոր աջակցություն է ցուցաբերվել համայնքների և մարզի թիմերին, ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված շիրակցի մարզիկներին՝ ՀՀ առաջնություններին, միջազգային մրցաշարերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին նախապատրաստվելու և մասնակցելու գործընթացում:

- «Մրցաշրջան-2025»-ի մարզական ձեռքբերումները.

Մարզական-զանգվածային միջոցառումներ՝

N	Միջոցառման անվանումը	1	2	3	ԸՆԴ.
1	«ՀՀ վարչապետի գավաթ»՝ սիրողական մրցաշարեր	-	2	1	3
2	ՀՀ վարչապետի հովանու ներքո՝ մարզական խաղեր	-	1	-	1
3	7-12-րդ դասարանների սովորողների սպարտակիադա	1	2	3	6
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԴԱԼ	1	5	4	10

Հայաստանի Հանրապետության պաշտոնական առաջնություններ՝

Տարիքայի խումբ	Մրցում քանակ	1	2	3	ԸՆԴ.
Մեծահասակներ	27	70	50	61	181
Երիտասարդներ	14	36	23	36	95
Պատանիներ	23	50	62	69	181
Դեռահասներ	6	14	13	24	51
ԸՆԴԱՄԵՆԸ	70	170	148	190	508

Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, համաշխարհային ունիվերսիադա...

N	Միջոցառման անվանումը	Մրցում քանակ	Մասնթիվ	1	2	3	Ընդ.
1	Աշխարհի առաջնություն	7	18	1	-	3	4
2	Աշխարհի U 23 առաջնություն	1	4	-	1	-	1
3	Աշխարհի երիտասարդական առաջնություն	4	9	2	1	1	4
4	Աշխարհի պատանեկան առաջնություն	5	11	2	-	3	5
5	Աշխարհի գավաթի առաջնություն	2	6	2	-	1	3
6	Բանակայինների աշխարհի առաջնություն	1	2	-	-	-	-
7	Համաշխարհային ունիվերսիադա	2	4	-	-	1	1
8	Համաշխարհային գիմնազիադա	1	7	-	-	-	-
9	Եվրոպայի առաջնություն	6	22	4	3	2	9
10	Եվրոպայի U 23 առաջնություն	3	9	2	3	1	6
11	Եվրոպայի երիտասարդական առաջնություն	6	14	2	1	2	5
12	Եվրոպայի պատանեկան առաջնություն	5	13	2	1	2	5
13	Եվրոպայի U 15 առաջնություն	4	8	3	-	-	3
14	Եվրոպայի օլիմպիական փառատոն	2	3	-	-	-	-
15	Եվրոպայի փոքր երկրների առաջնություն	2	6	-	1	1	2
16	Բալկանյան երկրների առաջնություն	2	4	1	-	1	2
17	Կարատե, բազկամարտ, ուժ/եռամարտ՝ ԱԱ,ԵԱ	6	8	7	-	2	9
18	Ծանրամարտ ԱԱ՝ առանձին վարժաձևեր	-	-	7	-	1	8
19	Ծանրամարտ ԵԱ՝ առանձին վարժաձևեր	-	-	14	5	2	21
20	Ծանրամարտ ԱԳ՝ առանձին վարժաձևեր	-	-	1	1	-	2

21	Հրաձգություն ԵԱ՝ առանձին վարժաձևեր	-	-	5	3	4	12
	ԸՆԴԱՄԵՆԸ	59	148	55	20	27	102

Տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված Շիրակի մարզի մարզիչների թիվը՝.

Ազգային հավաքական		Երիտասարդական հավաքական		Պատանեկան հավաքական		Ընդամենը մարզիչ
գլխավոր մարզիչ	մարզիչ	ավագ մարզիչ	մարզիչ	ավագ մարզիչ	մարզիչ	
6	3	1	-	1	2	13

2025 թվականի ընթացքում կամավոր ատեստավորում են անցել մարզական ոլորտի 26 ներկայացուցիչներ.

Մարզիչ-մանկավարժ՝ 1 մարդ

Ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ 22 մարդ

Շախմատի ուսուցիչ՝ 3 մարդ

Վարչության աշխատակիցների կողմից կազմվել են շուրջ 1940 տարաբնույթ ելից և 1115 ներքին /տեղեկատվություն պարունակող ձևաչափեր, աղյուսակներ, ներքին գրություններ, քաղաքացիների դիմումների պատասխաններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ/ գրություններ։